




ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ

ԼՈՒՅՍ ԵՎ ԽԱՎԱՐ

...Խաարն անցանէ և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի: Որ ասէ, եթէ ի լոյսն իցէ և գեղքայր իւր առիցէ, սուտ է և ի խաւարի է տակալին...

Ա. Յովհան. Բ. 8—9:

Չմեռն է դեռ. սառցե կապանքը շղթայում է վտակն ու աղբերակունք, բքաբեր հողմը պաղություն և թախծալի մոռլ է ափոսում երկնից և երկրի երեսին. բայց ահա սառնամանյաց գրկում վերածնում փթթում է նոր տարին, և բնությունը խոր շունչ է քաշում. դեռ դժգույն է արևը, դեռ անգոր եմ նորա ճառագայթները, սակայն վեր՝ միշտ ավելի վեր է բարձրանում նա հորիզոնի վերա և շատ չի անցնի, վերևում կանգնած յուր կենսաբեր ջերմությունը կցողէ, ձմռան կապանքը կփշրէ, նոր գարուն կբացվի, նոր օրեր կգան, ծառն ու թռչուն կենդանություն կառնեն: Նոր տարի է, արարած աշխարհ զգում է ադ և կենսատատ հուսով շշնջում. կանցնի, կանցնի՝ շուտով ցուրտն ու մոռլ, ջերմ հովեր կշնչեն, կյանք և ուրախություն կբերեն:

Խավար է դեռ, մատախապատ է մարդկային կյանքի հորիզոնը, դուրսն անպակաս չարագուշակ փոթորկալից ամպերը, ներսը մարդկանց եսական կուրծքերի տակ մեռելալից պաղություն է տիրում. չոր ու սև կըրքեր կաշկանդում են սրտերը, մթին են հոգիք, դաժան ու մոռլ մտքերով պաշարված. սակայն, տե՛ս, հեռու արևելքում շողում է բարեգուշակ աստղը, ճշմարտության Արեգակի ծագումն ավետում աշխարհին, յուր

մեղմ ոգեպարար լույսով ցույց է տալիս այն տեղը, ուր չքավորության և խոնարհության գրկում հանգչում է Բեթղեհեմի Նորածին Մանուկը, և ամեն իմաստուն, որի հալացքը դեպի վեր, դեպի վսեմն ու խորհրդավորն է ուղղված, որ երկնքի երեսը քննել գիտէ, ամեն սիրտ, որ հովվական պարգություն և անկեղծություն ունի, որ երկնավոր բարին ու գեղեցիկը անմեղ սրբությամբ ընդունելու տրամադիր է, հիացած խոնարհում և երկրպագություն է մատուցանում հրաշալի Մանկան, անպատմելի բերկրությամբ և հուսով զգացված՝ զարթում, ելնում են թմրած հոգիներն և ամեն ջերմեռանդն քրիստոնյա բերան մրմնջում է. «Խաարն անցանէ և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի»:

...Լո՛ւյս... դեռ հազար տարիներ առաջ հայի հեթանոս նախնիք լույս էին որոնում, մաքուր կենդանաբար մի լո՛ւյս էր նոցա տենչանաց բարձրագույն ստարկան. նոքա լույս էին երգում, ամեն գեղեցիկ, սուրբ, ցանկալի բան լուստ անուևով կնքում. լուստ մեջ երանություն տեսնում, մինչև որ հալտնըվեցավ Մեծ Լուսավորիչը, Միածնի իջման տեղում լուստ վտակներ հոսեցին, Հայոց խավար լեռների որդիներն անցան ադ ավազանից և լուսանորոգ վերադարձան:

Լո՛ւյս... Այսօր էլ մեր ժողովուրդը ժամա-

նակավոր թմրությունից արթնացած լույս է կանչում, լուսո շավիղներով դեպի փրկություն դիմել ձգտում։ դարերի բռնությունը չէ մարել նորա կրծքում սրբազան տենչանքի հուրը և նա կարոտ անձուկով դիմում է դեպի ամեն կողմ, ուր նորան լույս են խոստանում, նորա աչքի առաջ լուսո լապտերներ են շողացնում։ և բազմաթիվ են այդպիսի լապտերներ, միության մեջ մի առանձին հրապույր ունին։ Ժամանակ է որ նա շվարած կանգ առնե և հարցնե. ո՞րն է ճշմարիտ լույսը։

«Որ ասե, եթե ի լույսն իցե և գեղբայր իւր ատիցե, սուտ է և ի խաարի է տակաւին»։ ասա՛ պատասխանը, մի դատավճիռ, որ ուժգին հողմի նման անցնում՝ մարում է մեր շուրջ պսպղացող կարծեցյալ լույսերը և խավարի սաստկությունը յոթնապատիկ ավելի զգալի է դարձնում։

...Բնական, ինքնաբերական, ճշմարիտ լույսը յուր ջերմությունը հետը պիտ ունենա։ Եւ լույսը, որ սիրո ջերմությունից գուրկ է, որ մարդոց սրտերը չէ հալում, իրար հետ կապում, սրբույն, ազնվին, բարվույն համար

զգայուն դարձնում՝ կեղծ է, ասում է առաքյալը, մութացածո և արվեստական։ Ծշմարիտ լույսը միայն արտաքին սնոտի փայլով մարդոց աչքերը չէ շլացնում, այլ ճառագայթում է նոցա հոգու մեջ։ կրթում, ազնվացում է նոցա սիրտը։ Եթե արդարև նոր տարին մի նոր կյանքի ճանապարհ պիտի բանա մեզ համար, ապա մեր ճանապարհը այսպիսի լուսո լապտերով պետք է լուսավորված լինի։ Եթե մեր հոգևոր բարոյական կյանքը կաշկանդող, անբերրի անապատ դարձնող սառնամանիքը զվարթերես գարնան տեղի պիտի տան՝ ապա ընդհանուր եղբայրական սիրո ջերմ ճառագայթները պետք է նորա վերա ընկնեն, մինչև կուրծքերի խորքը թափանցեն։

Զմեռն է դեռ և խավար, բայց հեռու հորիզոնի վերա կանգնած՝ ջերմ լույս է ակոտում ամեն հավատացյալի սրտի մեջ Բեթղեհեմի ավետաբեր աստղը և թելադրում՝ երգել երկրների հրեշտակների հետ մեկ տեղ։ «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

(«Արարատ», Վաղարշապատ, 1895, հունվար, էջ 1—3)։

